Հաստատում եմ՝
ԵՊՀ պրոռեկտոր
Է. ԱՍՐԻՅԱՆ

25.03.2021

ԿԱՐԾԻՔ

Սուրեն Սերյոժայի Աբրահամյանի «Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը» թեմայով ժ. 01. 02 («Նորագույն շրջանի հայ գրականություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին: (Ընդունված է ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի 2021 թ. մարտի 29-ին տեղի ունեցած նիստում, արձանագրություն թիվ 6)

Ելույթ ունեցան պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Լ. Սեյրանյանը:

Նշվեց, որ Սուրեն Սերյոժայի Աբրահամյանի «Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը» թեմայով աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, որտեղ գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում էլ կայանալու է պաշտպանությունը: Խորհուրդը այն կարծիքի է ուղարկել ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոն՝ որպես առաջատար կազմակերպության:

Նշվեց, որ պաշտպանության ներկայացված աշխատանքը ընդգրկում է հսկայածավալ նյութ՝ մեծաթիվ ու տարաբնույթ բանաստեղծների ստեղծագործությունները, որ հեղինակի պարբերացումով՝ «արդի հայ պոեզիայի» ժամանակահատվածի շրջանակում են: Հեղինակը քննում է նաև արդի հայ պոեզիայի ձևավորման, ակունքների շրջանի իրողությունները՝ և՛ պոեզիան, և՛ տեսությունը:

Այս մեծածավալ ու ծանրակշիռ ուսումնասիրությունը նախ լույս է տեսել մանրատառ 740 էջանոց գրքով, ապա համակարգչային 600 էջանոց խմբագրված տարբերակով ներկայացվել պաշտպանության՝ որպես դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Աշխատությունը իրապես գնահատելի է մի շարք կողմերով, որոնք մեզ՝ որպես արտաքին գրախոսի, լիարժեք հիմք են տալիս այն

երաշխավորելու պաշտպանության, նաև հավելելու, թե դրա հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Ուսումնասիրությունը թեմայի, նյութի այս ընդգրկունությամբ արդեն իսկ վկայում է, որ այն տևական ու տքնաջան աշխատանքի արդյունք է, որ հեղինակն իր « նյութի» մեջ է ու նրա հետ: Ս. Աբրահամյանը պատահական դիտող չէ, տարիների իր գործն է եղել դա, արդի (և ոչ միայն) հայ պոեզիայի, նաև գրաքննադատության զարգացման ընթացքին նա հետևել է մշտապես:

«Ներածությունից», «Քննադատությունը և գրական ընթացքը. պատմական ակնարկ», «Ռ. Դավոյանի բանաստեղծական ժառանգությունը», «Իրականության պոեզիա. «ապոետիկ սկզբի» կամ բանաստեղծության «անհետացման» տեսություն», «Պոեզիայի իրականությունը. բառի մետաֆիզիկական նախասկզբի որոնումը» վերնագրերով չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից բաղկացած ուսումնասիրությունը թեմայի ուսումնասիրման արժեքավոր օրինակ է՝ թե՛ նյութի ընդգրկմամբ և թե՛ մեթոդաբանությամբ: Հեղինակը պատկերագծել է մեկնաբանական շրջանակը, արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգի քննության համար առաջարկել հերմենևտիկական մեթոդի կիրառման արդյունավետ լուծումներ, արդի բանաստեղծության կառուցվածքի մեկնաբանմանն ուղղված մոտեցումներ, կառուցվածքային-նշանագիտական վերլուծության, պոետիկայի և աշխարհայացքի միասնության քննության սկզբունքներ: Նշված մեթոդների և մոտեցումների նպատակային կիրարկումով Աբրահամյանն ուսումնասիրել է արդի գեղարվեստական մտածողության ձևավորմանը նպաստող ազգային և համաշխարհային ներազդումները, ներգրական գործոնները և արտագրական իրողությունները՝ գրապատմական միջավայրը և գրական գործընթացը, նոր համակարգի կայացման ընթացքն ու նկարագիրը: Այդ ամենը գրականագետը փորձում է ներկայացնել գրական բանավեճերի հանգամանալի դիտարկումներով, անհատի և ժամանակաշրջանի բարդ առնչությունների մեկնաբանմամբ, արդի հայ բանաստեղծների անհատական խառնվածքային և աշխարհայացքային առանձնահատկությունների վերհանմամբ: Ատենախոսը, գնահատելով վերջին տասնամյակի քննադատության՝ արդի հայ պոեզիայի ուսումնասիրմանն ուղղված փորձերը, կարևորում և յուրովսանն լուծում է տեսական

համակարգման և պարբերացման խնդիրներ, շեշտադրում գրական ընթացքի պատմականության ընկալման հարցը:

Հաջողվածության կարևոր առհավատչյա է նաև աշխատանքի նպատակահարմար կառուցվածքը՝ գլուխների բաժանումը բանաստեղծների զատորոշման և խմբավորման սկզբունքներով: Նախ՝ առանձին գլխով ներկայացված է Ռազմիկ Դավոյանի ստեղծագործությունը՝ որպես սևակյան շրջանի և արդի փուլի միջև ընկած ու նաև առ այսօր շարունակվող կարևոր իրողություն, ապա՝ առանձնացված է բանաստեղծների երկու հիմնական խմբավորում՝ ճիշտ և համոզիչ վերնագրերով՝ «Իրականության պոեզիա» և «Պոեզիայի իրականությունը»:

Ռ. Դավոյանի պոեզիան համարելով բանաստեղծական նախընթաց պարբերաշրջանի ավարտը և նոր շրջափուլի սկզբնավորումը նշանավորող սահմանային որակ՝ Աբրահամյանն արդի հայ բանաստեղծության համակարգային դիտարկման արդյունքում առանձնացնում է երկու ուղղություններ, որոնցից առաջինի նկարագիրն ամբողջանում է «իրականության պոեզիա», իսկ երկրորդ ուղղության էությունը՝ «պոեզիայի իրականություն» բնորոշումներով: «Իրականության պոեզիայի» և բանաստեղծության «անհետացման» տեսության քննությունը կատարվում է Ս. Չիլոյանի, Հովհ. Գրիգորյանի, Ա. Հարությունյանի, Դ. Հովհաննեսի բանաստեղծական համակարգերի դիտարկումով: Պոեզիայի իրականության և բառի մետաֆիզիկական նախասկզբի որոնման հատկանիշներով բնութագրվող ուղղության հեղինակներ են համարվում և ըստ այդմ էլ գնահատվում են Հ. Էդոյանը, Ա. Ավդալյանը, Հ. Մովսեսը, Հ. Սարուխանը, Ա. Մարտիրոսյանը և Վ. Հակոբյանը:

Առանցքային հեղինակներին զուգահեռ ատենախոսն իր տեսադաշտում է պահում նաև արդի հայ բանաստեղծության համատեքստում ինքնօրինակ նկարագրով առանձնացող և ըստ այդմ արժևորվող այլ բանաստեղծների, ինչպես և զուտ գրապատմական նշանակություն ունեցող հեղինակների: Ուսումնասիրության ամբողջացման նպատակով Աբրահամյանը, հետևելով արդի հայ բանաստեղծության զարգացման տրամաբանությանը և միտումներին, փորձում է պատկերագծել հնարավոր նոր զարգացումների հեռանկարը, արտահայտում քննադատի իր մտահոգությունները:

Գլխավոր խնդիրը՝ առանձին հեղինակների ինքնությունը և նրանց ստեղծագործության արժեքը դիտարկելով՝ տեսնել ընդհանրականը, ցույց տալ «արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը», որ ուսումնասիրության խորագիրն է ու հիմնախնդիրը, ըստ էության հաջողվել է աշխատության հեղինակին: Հիմնախնդրի լրջությունն ու կարևորությունը արդեն իսկ ամեն մի գիտական ուսումնասիրության հաջողության առաջին պայմանն է, որ կանխորոշում է նաև նրա կարևորությունը տվյալ գիտության հետագա զարգացման համար: Կարծում ենք՝ այս ուսումնասիրությունը մերժամանակյա հայ պոեզիայի պատմության հետագա հետազոտողներին կարող է օգտակար հուշումներ տալ: Չմոռանանք, որ հեղինակը բերում է փաստական հարուստ նյութ, ժամանակակիցների գրադատական արձագանքը այդ նյութին, նաև իր՝ այդ բանաստեղծների ժամանակակցի, ինչպես նաև նրանց հետ ունեցած անմիջական շփումներից, զրույցներից ծնված մտածումներն ու եզրահանգումները: Կարևոր է նաև, որ հեղինակը արդի հայ բանաստեղծությունը հաճախ դիտարկում է ոչ միայն հայ, այլև եվրոպացի ու ռուս տեսաբանների մտքերի զուգադրումներով, որ, անշուշտ, ուսումնասիրության գիտական ոճի մի ցուցիչ է:

Արդի հայ բանաստեղծության զարգացման օրինաչափությունները ատենախոսն ակնարկային անդրադարձով իրավացիորեն քննում և իմաստավորում է ժամանակի արձակի առանձնահատկությունների զուգահեռ դիտարկումով:

Աշխատության արժանիքների շարքում հիշատակելի են թե՛ ուսումնասիրության՝ բախտինյան իմաստով երկխոսական սկզբունքը՝ քննադատ-բանաստեղծ, քննադատ-քննադատ, քննադատ-տեսաբան (տեսաբանական մտքի հին և նոր դրսևորումներ), արդի հայ բանաստեղծություն-ազգային բանաստեղծական ավանդույթ, արդի հայ բանաստեղծություն-համաշխարհային բանաստեղծական ավանդույթ չափումներով, թե՛ հերմենևտիկական ընթերցման բազմաչափ կիրառումը: Ատենախոսը արդի հայ բանաստեղծության առանցքային ներկայացուցիչներին դիտարկում է միմյանց պարագրկող, հերթագայորեն լայնացող հերմենևտիկական շրջանակների մեջ՝ և՛ տվյալ բանաստեղծի ներքին համակարգում, զարգացման ներհամակարգային օրինաչափությունների լույսով, և՛ արդի հայ բանաստեղծության համապատասխան ուղղության ենթահամակարգում, և՛ ժամանակակից հայ պոեզիայի ամբողջական համակարգում:

Ուսումնասիրության մեջ կատարված ընդհանրացումների շարքում առանձնանում են պոեզիայի էությանը, դրա գոյաբանական առնչություններին, բանաստեղծության փրկաբանական դերին, ինքնաճանաչման և հայրենաճանաչման խնդիրներին, մարդու և ժամանակի, պոեզիայի և հայրենիքի բարդ առնչություններին վերաբերող արժեքավոր դիտարկումները՝ երևույթների պատկերավորման և իմաստավորման կոնկրետ օրինակների վկայակոչումով:

Աբրահամյանի ատենախոսության շատ այլ արժանավորություններ կարելի է հիշատակել, բայց, այնուամենայնիվ, նրանում առկա են նաև թեկուզև ոչ շատ էական թերություններ:

Անգամ այսպիսի ծավալուն, բազմաբնույթ պոետական ժառանգության քննարկման դեպքում ատենախոսության սահմանները պիտի այսքան չձգվեին, եթե հեղինակը առաջնորդվեր իր ընտրած վերնագրի թելադրանքով, և գրքից ատենախոսություն ստանալու ջանքը նրան տաներ առավել խտացման և ընդհանրացման հասնելու ճանապարհով:

Առանձին դեպքերում հեղինակը տրվում է եվրոպացի և ռուս մոդայիկ տեսաբանների մտքերի հաճախակի, երբեմն էլ անհարկի վկայակոչման գայթակղությանը: Օրինակ՝ մի էջում «հյուրընկալվում» են Սոսյուրը, Դերիդան, Օրտեգա-ի-Գասեթը, մի այլ կես էջի մեջ՝ «ինչպես Հայդեգերը կասեր...», «իսկ Ցվետաևան հավելում է...», «ինչը Դերիդան... ձևակերպում է...», «եթե Գր.Հակոբյանը Գր. Պըլտյանի հետևությամբ չհակադրվեր...» և այլ մտքեր: Անշուշտ, գիտական աշխատանքը պահանջում է գիտական ոճ՝ զուգահեռներ, վկայակոչումներ, բանավեճ, համապատասխան եզրաբանություն, որոնք ունի այս ուսումնասիրությունը, բայց պետք է խուսափել դրանց չարաշահումից: Կարելի էր խուսափել նաև լեզվական որոշ անհստակություններից:

Սուրեն Աբրահամյանն ունի մտածելու, գրական-տեսական իր գիտելիքները, վերլուծություններն ու դատումները ներկայացնելու անհատական կերպը, շարադրանքի իր լեզուն ու ոճը: Քննարանված նյութի ծավալը, արդյունավետ մեթոդաբանությունը, համակարգային մոտեցումը և արժեքավոր ընդհանրացումները հիմք են տալիս եզրակացնելու, որ ատենախոսությունը կարելի է հանձնարարել հրապարակային պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ - Սուրեն Սերյոժայի Աբրահամյանի «Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը» ուսումնասիրությունը բավարարում է դոկտորական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, ուստի այն կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Հայ նորագույն գրականության

ամբիոնի վարիչ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ամբիոնի վարիչի ստորագրությունը

հաստատում եմ՝ ԵՊՀ գիտքարտուղար Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ